Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

**Կ-288-20.09.2019-ՊԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 222-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից «կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը» բառերը հանել.

2) 2-րդ մասում «բանդայում մասնակցությունը» բառերից հետո լրացնել «կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) անչափահասի ներգրավմամբ,

3) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Իր կողմից բանդայում մասնակցելու մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հանցավոր համագործակցություն ստեղծելը» բառերից հետո լրացնել «կամ ղեկավարելը» բառերը.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) անչափահասի ներգրավմամբ,

3) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

3) 4-րդ մասից «հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու կամ» բառերը հանել, իսկ «պետական» բառը փոխարինել «քրեական հետապնդման» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 223.1-րդ, 223.2-րդ, 223.3-րդ և 223.4-րդ հոդվածներով.

**«Հոդված 223.1. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը**

1. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն գլխի իմաստով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, ով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն՝ համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում

(այդ թվում նաև մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:

**Հոդված 223.2. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը**

1. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը՝ սույն օրենսգրքի 222-րդ կամ 223-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ,

5) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն գլխի իմաստով քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

**Հոդված 223.3. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը**

1. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելը կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակներով ներգրավելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ,

5) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

**Հոդված 223.4. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը**

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝

վերջիններիս անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով նյութական կամ ոչ նյութական օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքներն իրականացնելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կ-288-20.09.2019-ՊԻ-011/1 ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-288-20.09.2019-ՊԻ-011/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 222-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից «կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը» բառերը հանել.

2) 2-րդ մասում «բանդայում մասնակցությունը» բառերից հետո լրացնել «կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) անչափահասի ներգրավմամբ,

3) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Իր կողմից բանդայում մասնակցելու մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հանցավոր համագործակցություն ստեղծելը» բառերից հետո լրացնել «կամ ղեկավարելը» բառերը.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) անչափահասի ներգրավմամբ,

3) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

3) 4-րդ մասից «հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու կամ» բառերը հանել, իսկ «պետական» բառը փոխարինել «քրեական հետապնդման» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 223.1-րդ, 223.2-րդ, 223.3-րդ և 223.4-րդ հոդվածներով.

«**Հոդված 223.1. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը**

1. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն գլխի իմաստով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, ով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն՝ համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է

քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում նաև մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:

**Հոդված 223.2. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը**

1. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը՝ սույն օրենսգրքի 222-րդ կամ 223-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ,

5) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն գլխի իմաստով քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ

գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

~~4. Սույն գլխի իմաստով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող է համարվում այն անձը, ով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն՝ համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում նաև մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:~~

**Հոդված 223.3. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը**

1. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելը կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակներով ներգրավելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) զինված ուժերում կամ այլ զորքերում ծառայողի կողմից,

4) անչափահասի ներգրավմամբ,

5) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

**Հոդված 223.4. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը**

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը՝ վերջիններիս անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով նյութական կամ ոչ նյութական օգուտ կամ այլ առավելություն ստանալու կամ իրական կամ ենթադրյալ իրավունքներն իրականացնելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-288-20.09.2019-ՊԻ-011/1, Կ-288[1]-20.09.2019-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2. | | 3. | 4. | 5. |
| 1. | **«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ** | **Նախագծի հոդված 3** | **Հոդված 223.1 Քրեական միջավայր ձևավորելը կամ դրան նպաստելը**<br>1. Քրեական միջավայրի ավադույթները, սովորույթները, գաղափարները կամ վարքագծի կանոնները տարածելը, քրեական միջավայրում ընդունված վարքագծի կանոններով կամ գաղափարներով առաջնորդվելը կամ նշված կանոնների, ավանդույթների, սովորույթների կամ գաղափարների պահպանման նկատմամբ հսկողությունը, կարգավիճակով | Չի ընդունվել: Ներկայացված առաջարկի առնչությամբ հարկ է նշել հետևյալը.<br>1) Նախագծի շրջանակներում առաջարկվում է քրեական պատասխանատվություն նախատեսել քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու համար. նախատեսված հանցակազմը ձևական է: Ընդ որում, գործնականում «ստեղծել» կամ «ձևավորել» նշանակում | Չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պայմանավորված ազդեցության հիման վրա խնդիրներ լուծելը կամ քրեական միջավայրի հավաքներին մասնակցելը կամ քրեական միջավայրի գործունեության իրագործման համար դրամահավաք կազմակերպելը կամ այդ միջոցով ստացված նյութական օգուտը տնօրինելը կամ քրեական միջավայրի գործունեությանն այլ կերպ նպաստելը՝<br>պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:<br>2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝<br>1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,<br>2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,<br>3) զինված ուժերում ծառայող զինծառայողի կողմից կամ<br>4) անչափահասի ներգրավմամբ՝<br>պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:<br>3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները քրեական հեղինակություն ունեցող անձի կողմից կատարելը՝ | է օրինակ՝ հավաքագրել անդամներ, մշակել հանցավոր գործունեության ծրագրերը, որոշել համագործակցության նպատակները, կազմակերպական կառուցվածքը և այլն: Առաջարկվող խմբագրության պայմաններում հոդվածի վերնագրի էությունն արտացոլված չէ հոդվածի դիսպոզիցիայում, ինչն ընդունելի չէ: Հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված չէ օբյեկտիվ կողմն արտացոլող այնպիսի գործողությունների համակցություն, որը կենթադրի քրեական միջավայրի ստեղծում կամ դրան նպաստում:<br>2) Հարկ է արձանագրել, որ առաջարկվող ծանրացնող հանգամանքները համընկնում են Նախագծով առաջարկվող ծանրացնող հանգամանքների հետ: Այլ կերպ՝ Նախագծում արդեն իսկ իրացված են նշված ծանրացնող հանգամանքները:<br>3) Առաջարկվող հոդվածի 3-րդ մասի առնչությամբ հարկ է | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:<br>4.Սույն օրենսգրքի իմաստով քրեական միջավայր է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի հատուկ կանոնների համաձայն, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, որի նպատակն է սպառնալու, հարկադրելու, բռնության, հանցագործությունների կատարման կամ հանցագործությունների կատարմանը հովանավորելու, հանցավոր արարքների կատարմանն այլ անձանց ներգրավելու կամ այլ անօրինական գործողությունների միջոցով լուծելու հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) կամ ստանալ անօրինական օգուտ կամ այլ առավելություն:<br>5. Սույն օրենսգրքի իմաստով քրեական հեղինակություն ունեցող | նշել, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ է համարվում ոչ միայն քրեական հեղինակությունը, այլ նաև օրենքով գողը: Հետևաբար, առաջարկվող ձևակերպման դեպքում ծանրացնող հանգամանքում թվարկվող սուբյեկտային կազմը նեղացվում է, ինչը նպատակահարմար չէ:<br>4) Առաջարկվող հոդվածի 4-րդ մասի սահմանումը, ըստ էության, նույնաբովանդակ է և համահունչ է Նախագծում տրված սահմանմանը:<br>5) Առաջարկվող հոդվածի 5-րդ մասի առնչությամբ հարկ է նշել, որ նշված սահմանումը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից: Ընդ որում, Նախագծով արդեն իսկ բացահայտված է, թե ով է համարվում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձը. այդպիսի անձ կարող է դիտարկվել ինչպես քրեական հեղինակությունը, այնպես էլ օրենքով գողը:<br>6) Նախագծի շրջանակներում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անձ է համարվում քրեական միջավայրում առաջնորդական կամ վերահսկողական կարգավիճակից բխող որոշակի ազդեցություն ունեցող անձը:<br>6. Իր կողմից քրեական միջավայր ձևավորելու կամ քրեական միջավայրին իր մասնակցության մասին իրավապահ մարմիններին կամովին հայտնած և քրեական միջավայրի կողմից կատարված հանցանքի բացահայտմանը կամ կանխմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքներն այլ հանցակազմ չեն պարունակում: | խրախուսական նորմ է նախատեսվել քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմիններին կամովին հայտնելու և դրա գործունեության խափանելու համար: Այդպիսի խրախուսական նորմ առկա չէ խմբավորումը ստեղծելու կամ ղեկավարելու համար՝ հաշվի առնելով այդպիսի գործողությունների հանրային բարձր վտանգավորությունը: | |
| 2. | | **Նախագծի հոդված 3** | **223.2 Քրեական հեղինակություն ունեցող անձին դիմելը**<br>Քրեական հեղինակություն ունեցող անձին դիմելը՝ վերջինիս կարգավիճակով պայմանավորված ապօրինի ազդեցությունն օգտագործելու նպատակով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ | Չի ընդունվել: Հարկ է նշել, որ Նախագծի շրջանակներում «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը» հանցակազմի շրջանակներում ներառված է 3 սուբյեկտ՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակիցը, քրեական հեղինակությունը և օրենքով գողը (վերջին | Չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: | երկուսը դիտարկվում են բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ): Առաջարկվող ձևակերպման պայմաններում նեղացվում է սուբյեկտների շրջանակը, ինչը պրակտիկայում կարող է հանգեցնել ոչ համաչափ իրավական գնահատականի բացակայության: Ինչ վերաբերում է նշված հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորմանը, ապա Նախագծի շրջանակներում տրված ձևակերպումն առավելագույնս համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Առաջարկվող սանկցիայի առնչությամբ հարկ է փաստել, որ գործող քրեական օրենսգրքում «հանրային աշխատանքներ» պատժատեսակը որպես առանձին պատժատեսակ նախատեսված չէ օրենսգրքի Հատուկ մասի որևիցե հոդվածում: Վերջինս համարվում է այլընտրանք տուգանքին կամ առավելագույնը 2 տարի ժամկետով ազատազրկման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | դատապարտված անձանց դեպքում փոխարինվում հանրային աշխատանքներով: Իսկ «ազատության սահմանափակում» պատժատեսակն առհասարակ նախատեսված չէ գործող օրենսդրության շրջանակներում, հետևաբար, այն չի կարող նախատեսվել սույն հանցակազմի շրջանակներում՝ որպես սանկցիա: | |
| 3. | **ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ** | **Նախագծի հոդված 3** | Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 223.1-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2-րդ մաս, որով կսահմանվի քրեական աստիճանակարգություն ունեցող անձ հասկացությունը: Ըստ այդմ՝ նշված հասկացությունն ամրագրող՝ Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 223.2-րդ հոդվածի 4-րդ մասը անհրաժեշտ է հանել: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն. Նախագծով լրացվող 223.1-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով, իսկ 223.2-րդ հոդվածի 4-րդ մասը հանվել է: | Ընդունվել է: |
| 4. | | **Նախագծի հոդված 3** | Առաջարկվում է հստակեցնել «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող ունեցող անձ» հասկացությունը. անհրաժեշտ է, հասկացության սահմանումից զատ, նշել այդպիսի անձանց՝ | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում. քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հասկացության մեջ «քրեական | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքով գողին և քրեական հեղինակությանը: | աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող» բառերից հետո լրացվել են «(օրենքով գող կամ քրեական հեղինակություն)» բառերը: | |
| 5. | | **Նախագծի հոդված 3** | Առաջարկվում է հստակեցնել «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» հասկացությունը. անհրաժեշտ է, հասկացության սահմանումից զատ, նշել այդպիսի խմբավորման առավել հանրամատչելի տարբերակը՝ գողական աշխարհը: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում. քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացության մեջ «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» բառերից հետո լրացվել են «(գողական աշխարհ)» բառերը: | Ընդունվել է: |